

**«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ**

ա) «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուտեղ՝ Կենտրոն) հաստատված հաստիքացուցակով աշխատակիցների քանակը 48 է. իսկ պաշտոնային դրույքաչափերը ներկայացվում են համաձայն հաստիքացուցակի,

բ) Կենտրոնի աշխատակիցների 2019 թվականի ֆինանսական տարվա խրախուսման տարեկան ֆոնդը կազմում է 34986,2 հազ. դրամ,

գ) Կենտրոնի կողմից շահագործվում է թվով 2 տրանսպորտային միջոց՝ «KIA CERATO 1.6» մակնիշի (արտադրության տարեթիվ՝ 2010թ., պետական հաշվառման համարանիշ՝ 202SS03, թափքի տեսակ՝ սեդան) մարդատար ավտոմեքենա, որը սպասարկում է Կենտրոնի աշխատակիցներին (ապահովում է կազմակերպության կանոնադրական նպատակներով սահմանված խնդիրների բնականոն իրականացման և աշխատակիցների կողմից համապատասխան գործառույթների կատարման համար անհրաժեշտ ուղևորափոխադրումները, քանի որ Կազմակերպությունը գործունեություն է ծավալում տարբեր վայրերում (հասցեներում), մասնավորապես, հիմնական և ամենօրյա գործունեության վայր են հանդիսանում ք. Երևան, Մ. Խորենացու 162ա, ք. Երևան, Հալաբյան 41ա, ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 1-ին փողոցի 4-րդ նրբանցքի N56 (Կենտրոնի ուսումնական կենտրոն), Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» (ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Չոբանքարա) և «Աբովյան» (ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան) քրեակատարողական հիմնարկների ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի (ք. Երևան, Արշակունյաց 23) հասցեները) և «ՊԱԶ 4234» մակնիշի (արտադրության տարեթիվ՝ 2006թ., պետական հաշվառման համարանիշ՝ 028SS03, մարդատար ավտոբուս, թափքի տեսակ՝ վագոն), որը իրականացնում է

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծրագրի շրջանակներում ունկնդիրներին Երևան քաղաքից դեպի ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 1-ին փողոցի 4-րդ նրբանցքի N56 շենք (Կենտրոնի ուսումնական կենտրոն) և հակառակ ուղղությամբ տեղափոխումը: